ՀՏԴ 325 /479.243/ *Քաղաքագիտություն*

Ալվարդ Աբրահամյան
ԱրՊՀ Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ներկա հոդվածում հիմք ընդունելով այն, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացում միջնորդ սուբյեկտները և որոշ վերլուծաբաններ փորձում են շրջանցել հիմնախնդրի պատմական փաստարկները՝ կարգավորման բանալին փնտրելով միայն քաղաքական նպատակահարմարության դաշտում: Մերժելով այդպիսի մոտեցումը և վերլուծելով արցախահայության պետականակերտման պայքարի փուլերի՝ մելիքական իշխանությունների, ԼՂԻՄ-ի պետականության ձևի և ԼՂՀ-ի հռչակման շարունակական-դիալեկտիկական կապը, հոդվածում հիմնավորվում է պատմաքաղաքական նախադրյալների որոշիչ դերը Արցախի Հանրապետության կայացման և նրա միջազգային ճանաչման գործում:

Բանալի բառեր՝ *ինքնորոշման իրավունք, ղարաբաղյան հակամարտություն, միջազգային ճանաչում, Արցախի Հանրապետություն, գերտերություն, Եվրոմիություն*

Алвард Абрамян

ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

В настоящей статье указано, что некоторые посреднические организации и аналитики пытаются обойти исторические аргументы, в процессе урегулирования нагорно-карабахского конфликта и международного признания Республики Арцах, прибегая к решению проблем только в области политической целесообразности. Опровергая такой подход и анализируя этапы борьбы арцахских армян за государственноть: меликсих властей, форма государственности НКАО, непрерывная диалектическая связь провозглашения НКР, статья основана на решающей роли исторических и политических предпосылок в становлении и международном признании Республики Арцах.

Ключевые слова*: право на самоопределение, карабахский конфликт, международное признание, Республика Арцах, сверхдержава, Европейский союз.*

Alvard Abrahamyan

THE PROBLEMS OF INTERNATIONAL RECOGNITION OF THE REPUBLIC OF ARTSAKH

In the current article based on the fact that the settlement of the Nagorno-Karabakh conflict and the international recognition of the Republic of Artsakh, intermediary organizations and some analysts try to avoid historical arguments, seeking a clue to the settlement only in the field of political expediency.Refuting this approach and analyzing the stages of the struggle of the Artsakh Armenians for statehood: the Melik authorities, the form of the statehood of the NKAO, the continuous dialectical connection of the NKR proclamation,the article is based on the decisive role of historical and political prerequisites in the formation and international recognition of the Republic of Artsakh.

Keywords: *right to self-determination, Karabakh conflict, international recognition, Republic of Artsakh, superpower, European Union.*

Արդի միջազգային հարաբերություններում ինքնակազմավորված նոր պետությունների ճանաչման գործընթացը ծավալվում է տարածաշրջանային և գլոբալ յուրահատուկ պայմաններում, որտեղ վճռական դերը կատարում են գերտերությունները: Հայտնի է, որ էթնոքաղաքականն հակամարտությունների կարգավորման հիմքում դրվում են ազգերի ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքները: Գաղտնիք չէ նաև այն փաստը, որ նշված սկզբունքները շահարկվում են գերտերությունների կողմից, ելնելով սեփական շահերից:

Բնակչության տարբեր էթմիկական հանրույթների միջև ծագած ինքնորոշման հիմնախնդիրը քաղաքական հակամարտության խաղաղ հանգուցալուծման լավագույն միջոցն է: Սակայն երբ

հակամարտող կողմերից մեկը ինքնորոշման օրինավոր պահանջը հռչակում է որպես անջատողականություն, հակամարտությունը դառնում է ոչ միայն հետաքրքրության առարկա, այլև միջնորդների գործունեության ասպարեզ: Հետևաբար, տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքները քաղաքականացվում ու բարդանում են՝ հաճախ ստանալով շարունակական բնույթ:

Այդ ընթացքում որոշիչ պայմաններ են դառնում հակամարտող կողմերի միջև գոյություն ունեցող ռազմաքաղաքական հավասարակշռությունը և հիմնախնդրի հանդեպ միջազգային հիմնական դերակատարների դիրքորոշումը:

Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող քաղաքական գլխավոր այս փաստարկները որպես խոչընդոտներ հանդես են գալիս ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջության պահպանման սկզբունքների միջև գոյություն չունեցող, սակայն հմտորեն շահարկվող հակասությունները: Քաղաքական հարթությունում այս սկզբունքների բովանդակությունն ու ներքին տրամաբանությունն այնպես են աղավաղվում և ապահովվում տեղեկատվական այնպիսի աջակցությամբ, որ հանրային գիտակցությունն անխուսափելիորեն հակվում է այն բանին, թե իրոք այդ սկզբունքների միջև գոյություն ունեցող հակասություններն են խոչընդոտում ղարաբաղյան հիմնախնդրի իրավական լուծմանը և նրա միջազգային ճանաչմանը: Այդ սկզբունքներից մեկի կիրառումը իբր բացառում է մյուսի իրագործումը: Բնականաբար Ադրբեջանի Հանրապետությունը պատրաստ չէ ձևավորված ստատուս-քվոյի ճանաչմանը և այդ հիմքի վրա հաշտության պայմանագրի կնքմանը: «Փաստական իրավիճակի մերժումը ենթադրում է,- գրում է պրոֆ. Ա. Մանասյանը,-որ հիմնախնդրի կարգավորման գործընթացում պետք է դնել անցյալի ինչ-որ կարգավիճակ: Ի դեպ թե միջնորդները, թե Բաքուն, անընդհատ դեմ են արտահայտվում խնդրի պատմական հիմքերը մեջտեղ բերելուն, սակայն հենց այդ հիմքերին են դիմում, երբ մերժում են պատերազմի արդյունքում ստեղծված ստատուս-քվոն»[1]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի կայունացման ու նրա միջազգային ճանաչման շահագրգիռ կողմերը սկզբունքորեն տարբեր նպատակներ ունեն: Ոմանք այն համարում են միայն քաղաքական հարց և առաջարկում քաղաքական լուծումներ: Այս մոտեցման կողմնակիցները հայտարարում են, որ չպետք է հիմնախնդրի կարգավորման դաշտ բերվեն հիմնահարցի պատմահրավական հիմքերը՝ պատճառաբանելով, թե պատմական փաստերը սուբյեկտիվ բնույթ ունեն, հետևաբար պատմության մեջ խորանալը կարող է հիմնախնդիրը ավելի խճճել և նրա կարգավորման համար արգելքներ հանդիսանալ: Մինչդեռ հիմնահարցի պատմության նշանակությունը հակամարտությունների կարգավորման գործընթացում կայանում է նրանում, որ հնարավորություն է տալիս հասկանալու հակամարտության բուն պատճառական կապերն ու էությունը: Այստեղից էլ բխում է այն կարևոր հետևությունը, որ բոլոր այն պատմական փաստարկները, որոնք անմիջականորեն առնչություն ունեն հակամարտության բազմակողմանի ըմբռնման հետ, կարող են և պետք է ընդգրկված լինեն հակամարտության կարգավորման համատեքստում: Մինչդեռ որոշ միջնորդներ իրենց կոնկրետ շահերից ելնելով նախընտրում են շրջանցել հիմնախնդրի պատմական, իրենց ոչ ձեռնատու փաստարկները և հակամարտության կարգավորման բանալին փնտրել քաղաքական նպատակահարմարության դաշտում: Պարզ է, որ գերտերությունների մասնակցությամբ գոյություն ունեցող հակամարտությունների շուրջ ընթացող բանակցությունների գործընթացներից պատմական փաստերի դուրս մղումը կամ օգտագործումը պայմանավորված է նրանց շահերով: Իսկ ազդեցիկ միջնորդ գերտերությունների և նրանց առանձին խմբավորումների համար առայժմ ձեռնտուն Ղարաբաղի չճանաչված պետություն լինելն է: Հակամարտությունների եռուն ու անկայուն վիճակով շահագրգիռ գերտերությունները հնարավորություն ունեն անմիջականորեն միջամտելու թե՛ Հայաստանի թե՛ Ադրբեջանի ներքին գործերին: Գլխավոր միջնորդի դերում հանդես եկող Ռուսաստանը հիմնավորված փաստեր ունի պարզելու համար, թե պատմականորեն ով իրավունք ունի Լեռնային Ղարաբաղը իր հայրենիքը համարելու: Ռուս-հայկական հարաբերությունները բազմադարյա անցյալ ունեն, սկսած հենց Ղարաբաղի մելիքների ժամանակներից: Մեծ Հայքի մարզպանություններից մեկը հանդիսացող Արցախը ադրբեջանական պատմաբանները Կովկասյան Աղվանքի տարածքը համարելով հանդերձ, չեն ժխտում, որ այստեղ կառուցվող քաղաքաները, դպրոցներն ու վանքերը ոչնչով չէին

[1] Ա. Մանասյան, Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003, էջ 89:

տարբերվում հայկականից: Չի ժխտվում նաև Մեծ Հայքի հզոր պետականությունը մ.թ. 2-րդ դարում:[1] Մինչդեռ 2012թ. Մոսկվայում հրատարակված հանրագիտական տեղեկատվում ասված է, որ առաջին անգամ 1840թ. վարչական բարեփոխումների ժամանակ է ձևավորվել մահմեդական բնակչությունը՝ միասնական վարչական տարածքով և Հարավային Կովկասի քարտեզի վրա հայտնվել է Շամախու մարզը: 1859 թվականին այդ վարչակազմը տեղափոխվել է Բաքու՝ վերանվանվելով Բաքվի մարզ: [2]

ԱՄՆ-ը ևս հիմնավոր փաստեր ունի այդ մասին: Դեռևս 1988-1991թթ. սենատի մակարդակով ընդունած ու ԿՀՎ կողմից գաղտնազերծված փաստաթղթերում ԱՄՆ-ը ճանաչում և հաստատում էր Լեռնային Ղարաբաղը հայերի հայրենիքը լինելու պատմական իրավունքը: Սակայն 1996 թ. դեկտեմբերի 2-3-ը տեղի ունեցած ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթաժողովում հենց ԱՄՆ-ը փորձեց Հայաստանի Հանրապետությանը պարտադրել կարգավորման այնպիսի տարբերակ, որով Լեռնային Ղարաբաղը նորից պետք է բռնակցվեր ադրբեջանական պետությանը:

Եվրոպական խորհրդարանը քանիցս անդրադառնալով ղարաբաղյան հիմնախնդրին, մի շարք բանաձևեր է ընդունել (1987 թ. հունսի 12, 1990 թ. հունվարի 12, 1991 թ. մարտի 14, 1993 թ. հունվարի 21, 1999 թ. մարտի 11), որոնք անուղակիորեն փաստում են հայերի Լեռնային Ղարաբաղում պետականություն ունենալու պատմական իրավունքը:

Միջնորդ տերությունների համար լռության մատնված ցանկացած փաստ անհրաժեշտության դեպքում կարող է վերստին կյանքի կոչվել: Օրինակ Հարավային Կովկասում, երբ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի մասին Ռուսաստանի Դաշնությունը անմիջապես վերհիշեց 2008 թվի վրաց-օսական օգոստոսյան իրադարձությունների ժամանակ: Մասնավորապես՝ ՌԴ ֆեդերացիայի Խորհրդարանն ու Պետդուման հենվելով տարիներ շարունակ իրենց կողմից լռության մատնված վերոհիշյալ օրենքի վրա արձանագրեցին, որ 1991 թ. Վրաստանը իրավասություն չի ունեցել որոշելու իր նախկին ինքնավարությունների ճակատագրերը և ստեղծելու վրացական պետություն, որն իր կազմի մեջ կընդգրկեր Հարավային Օսյան ու Աբխազիան: Իսկ նույն թվականի սեպտեմբերի 11-ին լեհական մի պարբերականում տված հարցազրույցում ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովը հայտարարեց, որ. «Հարավային Օսեթիան և Աբխազիան փաստացի եղել են անկախ պետություններ: Համաձայն ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի՝ բացառապես լեգիտիմորեն, այս երկու ինքնավար կազմավորումները անկախացել և դուրս են եկել Վրաստանի կազմից: Դրա իրավացիությունը չի կարելի անտեսել, քանի որ հենց ինքը՝ Վրաստանը ԽՍՀՄ կազմից դուրս է եկել համաձայն նույն օրենքի»[3]: Այսինքն, 1990 թվի ապրիլի 3-ի արդեն պատմություն դարձած օրենքը Ռուսաստանի համար իրավական հիմք հանդիսացավ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը ճանաչելու համար:

Ռուսաստանի հետ Ղրիմի վերամիավորման գործընթացում Ռուսաստանին մեղադրող Արևմուտքի քաղաքական գործիչներին ու բանախոսներին ՌԴ նախագահ Վ.Վ. Պուտինը մի քանի անգամ պատասխանել է հարցով՝ թե ով է առայսօր ժխտել ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Օրինավոր հարց է առաջանում, թե ինչու Պուտինը նույն կարծիքը միանշանակ չի կիրառում Ռուսաստանի ռազմավարական դաշնակից Հայաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Ուրեմն, Հայաստանի ռազմավարական դաշնակիցը լինելով հանդերձ, ռուսական քաղաքական էլիտան կարևորագույն խնդիր է համարում նաև շահեկան հարաբերությունները Ադրբեջանի հետ:

1994 թ. փետրվարի 18-ին ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ Մոսկվայում՝ ՀՀ պաշտպանության նախարարի, պաշտպանության բանակի լիազոր ներկայացուցչի, Ադրբեջանի պաշտպանության նախարարի միջև կնքված արձանագրության 7-րդ կետը պարտադրում է, որ կողմերը իրավունք են վերապահում միջնորդին՝ անվտանգության գոտիներում ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների խախտման դեպքում կիրառել ներգործության բոլոր անհրաժեշտ միջոցառումներն ու միջոցները՝ ընդհուպ ռազմական, սույն արձանագրության պայմանները խախտող զինված կազմավորումների նկատմամբ:

[1] См. История Азербайджана, Баку, 1979г., стр. 39

[2] См. Политические системы современных государств /Энциклопедический справочник в четырех томах/ Т-1, М, 2012г., стр. 22

[3] "Gazeta Wyborcza", (Польша), 11 sentabra 2008, http://www.economica.com.ua/top/article/115785.html

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկիր Բիշքեկում արձանագրությունը ստորագրել էր իր շահերից ելնելով: Մոսկվան չէր ցանկանում կորցնել իր դիրքերը Ադրբեջանում և պատրաստ էր ամեն ինչ անել որպեսզի միջազգային խաղաղապահ ուժերը չհայտնվեն տարածաշրջանում: Սակայն 1994 թ. «դարի պայմանագիրը» ստորագրելուց հետո խաղի մեջ ներգրավվեց նաև Արևմուտքը, հայտարարելով, որ ռուսական «կապույտ սաղավարտների» քանակը չի կարող գերազանցել խաղաղապահ ուժերի քանակի կեսին: Բաքվում հասկանում էին, որ բիշքեկյան արձանագրությունը Ադրբեջանի պարտության ոչ հրապարակային ընդունումն ու Հայաստանի դիրքերի ամրապնդումն էր[1]:

ՀՀ-ի և Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնահերթ խնդրի լուծումը խարսխվեց բազմամակարդակ համակարգի վրա, որը պահանջում էր հայ-ռուսական ռազմական համագործակցության խորացում ու ակտիվացում: Միաժամանակ հաջողություններ ձեռք բերեցին հայ-ամերիկյան և եվրոպական երկրների բարեկամական հարաբերությունների ամրապնդման ասպարեզում: Վերջին տասը տարիների ընթացքում 180-ից ավելի միջպետական, միջկառավարական, միջգերատեսչական պայմանագրեր կնքվեցին: Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը թևակոխեց նոր հանգրվան: Բարձր մակարդակի հանդիպումների ու փոխայցելությունների շարքում կարևորվեց 2010 թ. օգոստոսի 19-21-ը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն, որի արդյունքում կարևորվեց «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանների մասին պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 5 արձանագրությունը, որը համապատասխանում է երկու երկրների ռազմավարական հետաքրքրություններին և բխում է տարածաշրջանում անվտանգության ամրապնդման շահերից: Ըստ այդ արձանագրության ՀՀ-ի և ՌԴ-ի միջև 1995 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թվականը[2]:

Հայ-ռուսական ռազմական համագործակցության վերաբերյալ 2011 թվին ստորագրվեցին 20-ից ավել երկկողմ պայմանագրեր: Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովող ամենաշահագրգիռ պետության՝ ՌԴ-ի հետ հարաբերությունների զարգացումը՝ ապրանքաշրջանառությունը, ռազմական, ռազմատեխնիկական, քաղաքական համագործակցությունը, բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև ԼՂՀ-ի տնտեսական ու սոցիալական խնդիրների կարգավորման համար:

Եվրոինտեգրման խնդիրը և եվրոպական երկրների հետ փոխշահավետ բարեկամական փոխհարաբերությունների պահպանումը նույնպես շատ կարևոր դերակատարություն ունի հակամարտությունների կարգավորման և ԼՂ հանրապետության միջազգային ճանաչման գործում: Քաղաքական երկխոսության զարգացման տեսանկյունից հատկապես հիշարժան են Հայաստանի բարեկամական փոխհարաբերությունները ԵՄ այնպիսի ազդեցիկ անդամ պետությունների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Բելգիան, Շվեդիան, Հունաստանը և այլն: Եվրոմիությունը այժմ դարձել է Հայաստանի խոշորագույն առևտրական գործընկերը: 2000թ.-ից ուժի մեջ մտավ եվրոպական համայնքների և դրանց անդամ երկրների ու Հայաստանի միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագիրը, որը իրավական հիմք ստեղծեց Հայաստանի Հանրապետության և ԵՄ համագործակցության համար՝ կանոնակարգելով ԵՄ-ի կառույցների և ԵՄ-ի անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության ողջ համալիրը: Եվրոմիության հետ հարաբերություններում, բնականաբար, կարևոր տեղ է զբաղեցնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը: ԵՄ-ի աճող հետաքրքրությունը Հարավային Կովկասի հանդեպ հանգեցրեց Եվրոմիության ակտիվությունը տարածաշրջանի հակամարտությունների հանդեպ: Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացում բացառիկ կարևոր նշանակություն է ստանում հատկապես 2017թ. նոյեմբերին ընդունված ԵՄ-Հայաստան համաձայնագիրը:

Հայաստանը աշխուժացրեց իր հարաբերությունները Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ: Այս կազմակերպության նշանակությունը

[1] Տե՛ս Армения приостановила войну на победной ноте, http://minimal.az/autor/550/

[2] Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության ընթացիք արխիվ, «ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2010 թ. ամփոփում», թ. 8:

Հայաստանի համար հսկայական էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում, որի միջնորդական առաքելությունը ստանձնել են ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը և նրա համանախագահները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան:

Արդյունավետ համագործակցություն ծավալվեց նաև ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի հետ ԼՂ հակամարտության գոտում զինադադարի ռեժիմի պահպանության ուղղությամբ: Հայ դիվանագիտության առջև խնդիր դրվեց ապահովել մեր երկրի ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը միջազգային ազդեցիկ կառույցներին, համաշխարհային և տարածաշրջանային ազդեցիկ ուժերին:

Դինամիկորեն են զարգանում Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները: 2002 թվից Հայաստանը այդ ազդեցիկ կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի թղթակից անդամ է և միացել է «Ահաբեկչության դեմ գործընկերության գործողությունների ծրագիր» փաստաթղթին[1]:

Հայ-իրանական քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը ապահովում է Իրանի բարյացակամ դիրքորոշումը ԼՂ հանրապետության կայացման ու անվտանգության ապահովման գործը:

Անդրադառնալով Հայաստանի առաջին հանրապետության անապահով տարածքի խնդիրներին Գարեգին Նժդեհը դիպուկ գրում է. «Այս փոքրիկ Հայաստանի ռազմավարական բոլոր կետերը խլված են: Նա պաշարված է մեր դարևոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրված է այնպիսի հաշիվների վրա, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին՝ հարմար պարագային նուազագոյն զոհողություններով և ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայությանը»[2]: Ելնելով Գարեգին Նժդեհի այս դիպուկ բնութագրումից, կարող ենք համոզվել, որ տարածքային ցանկացած զիջում Լեռնային Ղարաբաղի հանրապետությանը կդնի այնպիսի կարգավիճակում, ինչպիսին հայտնվել էր Հայաստանի առաջին հանրապետությունը:

[1] Տե՛ս Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Եր., 2013, էջ 368:
[2] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 59: